Արձանագրություն N 2
<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/2>> ծածկագրով գնման գործընթացի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26.06.2017 թ.
ժ. 14:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Ա. Նազարեթյանը,
Հանձնաժողովի անդամներ	Ա. Հովսեփյանը /գնահատող/,
	Գ. Գևորգյանը /գնահատող/,
	Գ. Խաչատրյանը /բացող/,
	Գ. Ծատուրյանը /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը:

1.Բաց ընթացակարգի հայտերի բացման մասին
(Ա. Նազարեթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման առարկայի ընդհանուր գինը 20000000 ՀՀ դրամ է.

բ) Գնանշման հարցման հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

հ/հ	Մասնակցի անվանումը	Հասցե
1	<<Սեյսմնախագիծ>> ՍՊԸ	seismanaghagic@yahoo.com
2	<<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն>> ԲԲԸ	hayseysmshin@mail.ru

գ) <<Սեյսմնախագիծ>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,

դ) <<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող լիցենզիան և լիցենզիայի ներդիրները, ինչպես նաև հայտի ապահովման չափը պակաս է հրավերով սահմանված չափից:

ե) Մասնակիցների կողմից առաջարկած գները հետևյալն են.

(ՀՀ դրամ)

հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (Ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Սեյսմնախագիծ>> ՍՊԸ	18990000	-	18990000
2	<<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն>> ԲԲԸ	6788100	1357620	8145720

1.2 Մերժել <<Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն>> ԲԲԸ-ի հայտը հետևյալ հիմնավորմամբ.

· Հայտի ապահովման չափը պակաս է հրավերով սահմանված չափից (հրավերով նախատեսված առաջարկած գնի 5%-ի փոխարեն ներկայացրել է 2%-ի չափով).

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցին.

- Առաջին տեղ զբաղեցնող ճանաչել <<Սեյսմնախագիծ>> ՍՊԸ -ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,

- Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին <<Սեյսմնախագիծ>> ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հուլիսի 3-ին, ժամը՝ 16:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ- 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Նազարեթյան

Անդամ՝ Ա. Հովսեփյան

Գ. Գևորգյան

Գ. Խաչատրյան

Գ. Ծատուրյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան